


Chippewa
Rug Quill
1913p



353

2-4079a

Օ.Ա.Ն.7325
ՏԵՂԻՄ

Լ. Ա. Ե Գ Ր Ւ Յ Ա

Առ. 1725

մի

ՔԱԶ ԳԱՅԼԸ

թարգմ. Դ. Պ.



891.71.5

Ա-58

Թիւլ 1 կոպ.

653003

ԹԻՓԼԻՍ

Տպարտն «ՀԵՇԻՄԻԿԱ», Գրահանձնութեա 6.

1913

Հարմ.
2-40792

ՁԱ. 1725

891.71.5
Ա - 58

ՔԱԶ ԳԱՅԼԸ

Գայլը անցնում էր փողոցով և սրան նրան պոչով խփում։ Նրա պոչը խոզի մազի նման կոշտ էր և փայտի նման պինդ։ Գայլը պոչով ամենքին էլ խփում էր. թէ մեծ, թէ փոքր, թէ աղջիկ, թէ տղայ—ամենքն էլ նրա պոչի համն առնում էին։ Մի անգամ էլ մի պառաւի այնպէս խփեց, որ խեղճը վայր ընկաւ, քիթը ջարդեց



ու արիւնլւայ եղաւ։ Գայլերը սովորաբար պոչը ներս քաշած են ման գալիս, բայց մեր կտրիճ գայլը պոչը ցցած էր քայլում։ Քաջ գայլ էր բայց միևնոյն ժամանակ և տխմար։



Q-29362-67

21057

Ոստիկանը նկատեց, թէ նա ինչպէս պառա-
շին գետին գլորեց, և ասաց.

—Տես, գայլ, եթէ դու այսուհետեւ էլ շա-
րունակես պոչովդ մարդու խփել, պոչդ սրովս
կկտրեմ: Ինչո՞ւ խփեցիր պառաւին:

Գայլը ստեց և ասաց.

—Պառաւը ինքը կպաւ պոչիս. միթէ չես
տեսնում, որ նա կոյր է: Սրան նայիր, դեռ ա-
նունն էլ ոստիկան է դրել:

Պառաւն իսկապէս կոյր էր: Ոստիկանն էլ
հաւատաց նրան:

Իսկ գայլը ժնգուտաց, ծիծաղեց ու մտածեց:

—Ի՞նչ լաւ խաբեցի ոստիկանին, գրողը տա-
նի: Եւ նա շարունակեց ճանապարհը:

Հէնց որ քիչ հեռացաւ, էլի սկսեց անց ու
դարձ անողներին պոչով խփել: Խփեց մէկին,
միւսին, երրորդին: Մի ծերուկ էր անցնում, մի
զամբիւղ լիքը ձու ձեռքին. Նրան էլ չխնայեց,
խփեց խեղճը գլորւեց, զամբիւղը վայր ընկաւ և
ձւերը կոտրատեցին: Գետինը ծածկւեց սպիտա-
կուցով և գեղնուցով: Ծերուկը վերկացաւ և ըս-
կսեց լաց լինել, իսկ գայլը քրքջում էր:

—Գրողը տանի, այ լաւ ձւաձեղ:

Այս անգամ ոստիկանը բոլորը տեսել էր.
Նա սաստիկ բարկացաւ:

—Զէ, գայլ, բանեցիր, էլ չես կարող ինձ
խաբել. աչովկա անպայծ կաչափութեաւ դու ծերուկին

գետին գլորեցիր: Հիմա որ պոչդ պիտի կտրեմ:

Ոստիկանը սրեց թուրը ու կտրեց գայլի
պոչը: Ոստիկանը գթուած մարդ էր. որպէս զի
արիւն չը գնայ՝ կտրած տեղը անգլիական սպե-
ղանի դրեց:

Լաց եղաւ գայլը և վազեց տուն: Խեղճը
մնաց անպոչ, իսկ առանց պոչինա շատ անշնորք
էր: Տեսնողները նայում ու ծիծաղում էին նրա
վրայ:

Վազեվազ գայլը տուն հասաւ. կարծում էր
թէ գոնէ կինը կիսդայ իրան: Իսկ կինը, երբ
տեսաւ, որ նա պոչ չունի, այնպէս գոռաց, որ
Աստւած ազատի:

—Պոչդ ուր է:

Գայլի լակուներն էլ թոչկոտում էին նրա
շուրջը և ծիծաղում, ասելով.


—Մեր հայրիկը պոչը կորցրել է:

Նրանք գեռ փոքր էին և կարծում էին, թէ
պոչը կարելի է կորցնել:

Գայլի բանը բուրդ էր. ոչ ոք չէր խղճում
նրան. բարկացաւ ու սկսեց գոռգոռալ:

—Գրողը տանի, պոչը իմս չէ. ինչ ուզեմ,
կանեմ, ձեզ ինչ: Կարելի է հէնց աղքատի եմ
տւել, չէ որ ես բարի եմ:

Էլի ուզեց ստել խորամանկ գայլը, բայց կի-
նը չըհաւատաց նրան. շատ լաւ գիտէր, թէ նա
ինչ բարի պտուղն է: Բարկացաւ, կանչեց ճա-



դատ դատաւորին, որ նա վճռէ թէ արդեօք գայլ
և իրաւունք ունի իւր պոչը ուրիշի տալու, թէ ոչ:
Ճաղատ դատաւորը եկաւ և հարցրեց.

—Ասացէք ինդրեմ, գայլը ամուսնացած է,
թէ ամուրի:

—Ամուսնացած է, պատասխանեց կիսը:

—Իսկ ում հետ է ամուսնացած:

—Ինձ հետ:

—Երեխաներ ունի:

Լակոսները թոշկոտացին և սկսեցին բղաւել:

—Մենք նրա երեխաներն ենք, նա էլ մեր
հայրն է:


Ճաղատ դատաւորը սկսեց մտածել՝ և որ-
պէս զի կարողանայ աւելի լաւ մտածել՝ գլխի
վրայ կանգնեց ու ոտքերը վերև բարձրացրեց:
Նա ասում էր, թէ երբ ինքը այդպէս կանգնած է
լինում, իւելքը ամբողջապէս հաւաքւում է գլու-
խը: Հէնց միշտ այդպէս գլխի վրայ կանգնելուց
էլ մազերը թափւել էին, ճաղատ էր դարձել:

Սկսեց մտածել դատաւորը, շատ մտածեց,
երկար ժամանակ մնաց գլխիվար կանգնած. ամ-
բողջ երկու օր: Գլխիվար մնալուց երեսը կարմ-
րել էր ձմերուկի միջուկի նման: Վերջապէս վեր
կացաւ, շորի կտորով սրբեց ճաղատ գլուխը և
ասեց:

—Որովհետեւ գայլը ամուսնացած է, ուստի
պոչի միայն մի կէսն է իրան պատկանում, իսկ

միւս կէսը պատկանում է կնոջը և երեխաներին.
գայլ, ցոյց տուր տեսնենք՝ ո՞րքան է մնացել պո-
չիցդ:

Գայլը ցոյց տւեց և բոլորը ապշած մնացին:
Պոչից միայն մի փոքրիկ կտոր էր մնացել, հա-
զիւ մի վերջոկ: Ճաղատ դատաւորը գլուխը թա-
փահարեց և ահա թէ ինչ վճռեց:



—Գայլ, գու պիտի գնաս բժշկի մօտ, թող
նա նոր պոչ կպցնի: Իսկ գու, տիկին, տես, որ
կզցրած պոչը լաւը լինի և պինդ: Բայց աւելի
լաւ կանես, եթէ ինքդ էլ յետոյ անգլիական գըն-
դասեղով ամրացնես:

Դատաւորի իմաստուն վճռից բոլորը գոհ
մնացին: Գայլը ինքն էլ շատ գոհ եղաւ: Զէ որ
գայլի համար շատ անյարմար էր առանց պոչի

ման գալ: ոչ ճանձ կարող էր քշել, ոչ էլ նստելու ժամանակ գետնի փողին մաքրել: Բացի այդ առանց պոչի նա շատ անշնորհք էր:

Գայլը վազեց բժշկի մօտ: Այնպէս արագ էր վազում, որ քիչ մնաց շունչը կտրւի: Զանգը տւեց և սպասեց: Բժիշկը դուրս եկաւ, մեծ ակնոցները դրեց և հարցրեց:

—Ո՞րտեղդ է ցաւում պ. գայլ:

Գայլը մէկիկ մէկիկ պատմեց գլխի եկածը: Բժիշկը վերցրեց լսելու խողովակը և ասաց.

—Ձեր կրծքի մազերը խնդրեմ մի կողմ արէք, ես պէտք է ականջ դնեմ:

—Դրողը տանի, ասաց գայլը, լսելս հրն է, միթէ չէք տեսնում, որ ես պոչ չունիմ: Փորումս զուռնա հօ չեն փչում, որ ուզում էր ականջ դնել:

Սաստիկ բարկացել էր:

Բայց բժիշկը գլուխը տմբամբացրեց և ասաց.

—Ախ, ինչ անհամբերն էք դուք, պ. գայլ: Կարելի է ձեր փորումն էլ մի բան խանգարւել է. դրա համար էլ ուզում եմ ականջ դնել:

Ճարը կտրած գայլը պառկեց մէջքի վրայ, թաթերը բարձրացրեց և ալդպէս մնաց մինչև որ բժիշկը նրան լսեց: Գայլի փորում ամեն բան կարգին էր: Յետոյ բժիշկը վերցրեց երկաթէ մեծ մուրճը և թխթխկացրեց գայլի գլխին: Գլխումն էլ ամեն բան իւր տեղն էր:

—Այժմ ինձ համար պարզ է, որ ձեր հիւանդութիւնը պոչ չունենալուցն է առաջացել:

—Գրողը տանի: Հէր օրհնած, ախր ես ձեզ մի ժամ է խնդրում եմ, որ նոր պոչ կարէք, պ. բժիշկ:

Բժիշկը սկսեց մտածել, յետոյ գրքին նայեց: Եւ որովհետև վերնատունը դատարկ էր՝ այսպիսի բան մտածեց:



—Ահա թէ ինչ, պ. գայլ: Ես պատրաստի պոչ չունիմ, սակայն թոյլ տւէք պոչի տեղ արդուկ կպցնեմ:

—Ի՞նչ, բղաւեց գայլը:

—Այո, արդուկ էիի: Մեծ, տաք արդուկ: Գիտէք ինչքան յարմար կլինի, մինչև անգամ ձեր սպիտակեղէնն էլ կարող էք արդուկել: Եւ ամենից գլխաւորն այն է, որ գեղեցիկ էլ կլինի:

Գայլը համաձայնեց. քէֆը եկաւ, որ նոր պոչով սպիտակեղէն կարելի է արդուկել: Բայց երբ բժիշկը տաք արդուկը ամրացրեց՝ դուրս եկաւ ոչ թէ պոչ, այլ ցաւ ու կրակ: Փողոցով գնալիս տաք արդուկը նրա ոտքերը այրում էր, իսկ երբ նա սկսեց վազել՝ արդուկը ճոճուռմ էր և ոտքերը ծեծում: Միևնույն ժամանակ արդուկը քարերին դիպչելով մի այնպիսի աղմուկ էր բարձրացնում, կարծես փողոցով մի վաշտ զինւորներ անցնելիս լինէին: Ով տեսնում էր գայլին, ծիծաղից թուլանում էր. ծիծաղում էր ոստիկանը, ծիծաղում էին ձիերը, ծիծաղում էին շները: Մինչև անգամ քննուու կատուներն էլ կտուրն էին բարձրացել և քրքջում էին: Կատուի մի փոքրիկ ձագ այնքան ծիծաղեց, որ հազից թիչ էր մնում խեղդէր, լաւ էր որ կաթ խմացրին:

—Այ, քեզ օյին, գրողը տանի, մտածեց ինքն իրան գայլը: Ես ամենից կտրիմն էի, տես որ օրն եմ ընկել, որ մինչև անգամ սատկած կատուներըն էլ են վրաս ծիծաղում:

Գայլը յոգնեց. անտէր արդուկը բաւական ծանր էր: Հանաք բան է. հինգ գրւանքայ էր կըշուում: Ուզեց նստել, որ մի թիչ հանգստանայ և ուղղակի տաք արդուկի վրայ նստեց:

Կատաղած վեր թռաւ և ինչպէս բղաւեց: Վայ պապի, վայ նանի, այրւեցի:

Սկսեց կրկին վազել: Հասաւ տուն, բայց

քէֆը աւելի վատացաւ: Լակոտները ուզեցին հայրիկի նոր պոչը շնորհաւորել. շօշափեցին տաք արդուկը և թաթերը մի լաւ այրեցին: Սկսեցին բարձր ձայնով լաց լինել: Կինն էլ բարկութիւնից ունաց և ասաց:

—Իսկապէս, յիմար ես դու, գայլ: Այ մարդ, այդպէս էլ պոչ կլինի: Գնա, հեռացիր աչքից և չվերադառնաս մինչև որ լաւ պոչ չունենաս:

Լակոտները սուգ ու շիւան էին սարքել, ցափից լաց էին լինում ու գոռգոռում:

—Մեր հայրիկը յիմար է, մեր հայրիկը յիմար:

Գայլը բարկացաւ, նրանց բոլորին պատժեց. ամեն մէկին մի անկիւնում կանգնեցրեց, հինգերորդին էլ դատարկ սենեակում փակեց: Ցետոյ 20 կոպէկով մի կառք վարձեց ու գնաց ուրիշ բժշկի մօտ: Նրա կոյր բախտից այդ բժիշկն էլ շատ տխմար մարդ էր: Տեսէք թէ ինչ մտածեց:

—Գիտէք ինչ, պ. գայլ, ասաց բժիշկը, արդուկը ձեզ հարկաւոր չէ, աւելի լաւ է արդուկի տեղ ես պահարան կպցնեմ:

—Ի՞նչ, գոռաց գայլը:

—Պահարան էլի: Մի մեծ պահարան արկղներով: Սրանից էլ յարմար բան չէք կարող գտնել. կարող էք սպիտակեղէնն էլ նրա մէջը տեղաւորել: Եւ ինչքան գեղեցիկ, ճաշակով բան կլինի, ձեզ կսազի:

Գայլը համաձայնեց:

Բժիշկը կտրւած պոչի տեղ տախտակի մի
մեծ պահարան ամրացրեց: Գնում է գայլը փողո-
ցով և հոգին դուրս գալով քարշ է տալիս ծանր
պահարանը, հազիւ հազ շունչ է բաշում, սաս-
տիկ քրտնել է ու մտածում է:

—Ա՞խ, ի՞նչքան լաւ բան կլինէր, եթէ պոկւէր
այս անիծած պահարանը: Սակայն անխիղճ բժիշ-
կը այնքան պինդ էր կպցրել, որ պոկւելու ճար
չկար: Փողոցում էլ այնպիսի դղրդոց էր բարձ-
րացել, կարծես մի մեծ սայլ լինէր անցնելիս:
Իբր թէ այդ տանջանքը բաւական չէր՝ գեռ ա-
մենքն էլ սկսեցին գայլի վրայ ծիծաղել. քան
քահ ծիծաղում էր ոստիկանը, ծիծաղում էին
ծիերը, հոհոում էին շները: Տանն էլ կինը բար-
կացաւ, դուրս արեց և ոչինչ չտւեց ուտելու:
Հակառակի պէս այն օրը մէկը միւսից համեղ
կերակուրներ էին պատրաստել. ծարը կտրած,
կերակուրներ էին պատրաստել. ծարը կտրած,
քոռ ու փոշման նստել էր գայլը գրան մօտ և
ինքն իրան մտածում:

—Սա էլ օր է, որ ես քաշում եմ: Հիմա
ի՞նչ անեմ: Ախը այդպէս քաղցած մնալով ես կա-
րող եմ հիւանդանալ: Գոնէ անխիղճները մի քիչ
հաց տային, թէկուզ մի կտոր, գրողը տանի:

Լակոտը լսեց հօր ձայնը և մի կտոր հաց
բերեց հօր համար:

—Վերցրու, հայրիկ ջան, կեր:

Գայլը հացը կերաւ, համբուրեց իւր սիրե-
լի ձագուկին: Ապա մի մեծ սայլ վարձեց և
պահարանի հետ միասին գլորւեց սայլի մէջ:
Այս անզամ էլ ճանապարհեց մի երրորդ բժշկի
մօտ:

—Ի՞նչ կպցնեմ պոչիդ փոխարէն, պ. գայլ,
հարցրեց բժիշկը: Կուզես ինքնաեռ կպցնեմ: Շատ
յարմար կինի, քէֆդ ուզած ժամանակ թէյ ա-
նուշ կանես:

Սարսափեց գայլը և ասեց:

—Է՞լի տաք բան: Ոչ, ոչ, ես ոչ մի տաք
բան չեմ ուզում, գրողը տանի: Ինչ որ ուզում
էք կպցրէք, միայն թէ ոչ տաք լինի, ոչ ծանր
և ոչ էլ ծիծաղաշարժ:

Տես, թէ ինչպիսի դժւար հանելուկ առա-
ջարկեց բժիշկին: Սակայն այդ բժիշկը խելօք
մարդ էր և ասեց.

—Թոյլ տւէք պոչի փոխարէն հովանոց կըպ-
ցնեմ: Գայլը համաձայնեց և բժիշկը կպցրեց մի
մեծ հովանոց:

Բաց է արել գայլը հովանոցը, առօք փառօք
անցնում է փողոցով և այնպէս ուռած, փեւած,
որ ոչի վրայ չի էլ ուզում նայել: Այդ ժա-
մանակ անձրև էր գալիս. բոլորն էլ թրջւել էին,
միայն գայլն էր որ չէր թրջւել: Ամենքը նայում
էին գայլին և զարմանում:

—Ի՞նչքան խելօք է գայլը: Նայեցէք, մենք

բոլորս թրջւել ենք, գայլն է միայն չափչոր
ֆնացել:

Ամենից շատ նախանձում էին նրան կատու-
ները, որովհետև նրանք վախենում են ջրից:
Անձրէին ստիպւած նստում են տանը և գրօնե-
լու դուրս չեն գալիս: Ճաղատ դատաւորը գայլին
հանդիպեց ու նոյնպէս գովեց:

—Կեցցես, գայլ, այժմ միանգամայն գենե-
րալ ես դարձել: Իսկ գայլը ուռչում, նազ է ա-
նում, արորւում և ինչպէս է տրորւում: Պապի-
րոսը դրել է բերնին և ասում է դատաւորին:

—Լուցկի չունէք, պ. դատաւոր, ուզում եմ
ծխել: Բայց արի ու տես, որ ողորմելին ծխել
չըգիտէր, պապիրոսը որ կպցրեց, մի այնպիսի
հազ ու փոշտոց բռնեց, որ աչքերից արտասուրքը
սկսեց կաթկաթել: Դէ, արի ու մի ծիծաղիր:

Ճաղատ դատաւորը գլուխը թափահարեց,
քթի տակ ծիծաղեց և ասաց.

—Այդ ի՞նչ բան է, պ. գայլ. ծխել չգիտէք,
իսկ պապիրոսը բերանդ էք առել:

Գայլը կարմրեց, բայց էլի վզով չառաւ. կըր-
կին ստեց.

—Գրողը տանի: Դա նրանիցն է, որ ես
սխալմամբ պապիրոսի հակառակ ծայրն եմ բե-
րանս դրել:

Տանեցիք բոլորը ուրախացան, որ գայլը
այդպիսի լաւ պոչ ունի: Կինը ուրախութիւնից

մինչև անգամ սկսեց լաց լինել. նստած թաթիկ-
ներով դունչը սրբում էր, հա սրբում, արտա-
սուքն էլ անվերջ հոսում էր: Գետնին մի այն-
պիսի լճակ էր կազմւել, որ մարդ առանց
կրկնակօշկի այդտեղով անցնելիս կարող էր ոտե-
րը թրջել: Իսկ լակոտները գլուխկոնձի էին տա-
լիս և ուրախ ուրախ աղաղակում.

—Ի՞նչ խելօք է մեր հայրիկը, չկայ մէկը,
որ այնտեսակ պոչ ունենայ, ինչպէս մեր հայրի-
կինն է:

Յետոյ կինը գայլին կուշտ կերակրեց:
Ճաշից յետոյ կինը ասաց նրան:

—Գայլ, հիւր գնանք մեր սանամայր Սօնայի
մօտ: Թող բոլորը տեսնեն, թէ դու ինչպիսի գե-
ղեցիկ պոչ ունես և ճաքւեն:

—Շատ լաւ, գնանք, պատասխանեց գայլը:
Հիմա հիւր էլ կարելի է գնալ, հարսանիք էլ,
գրողը տանի:

Կինը գլխին դրեց փետրազարդ գլխարկը, իսկ
ձագերին հագցրեց խոր կրկնակօշիկներ, որովհե-
տե անձրևից յետոյ փողոցները ցեխ էին: Ինքը
և գայլը միշտ, մինչև անգամ ձմեռը, ոտարբորիկ
էին ման գալիս:

Ահա անցնում են նրանք փողոցով արորւե-
լով, նազ ու թուզ անելով: Հէնց այդ ժամանակ
արել դուրս եկաւ ամպերի տակից և սկսեց ան-
տանելի կերպով այրել: Ամենքը և գայլերը, և

շները կախ էին զցել լեզուները մինչև գետին և
փնթփնթում էին:

—Այսպէս էլ շոդ, հովհներս դուրս եկաւ,
այլ ևս ոյժ չկայ դիմանալու:

Իսկ քաջ գայլը բաց արաւ հովանոցը, կինը
ու լակոտները պատսպարւեցին արկից: Հովանո-
ցի տակ այնքան զով էր, կարծես անտառում լի-
նէին: Ամենքը նախանձով նայում էին նրանց և
գովասանքին էլ վերջ չկար:

—Մի տեսէք ի՞նչ գեղեցիկ պոչ ունի. իսկ
ամենքը մի բերան ասում էին, որ գայլը յիմար
է, այն ինչ նա ամենախելօքն է. նրան նահան-
գապետի պաշտօն պէտք է տալ:


Իսկ նրանք ուռչում, փրւում էին: Եւ գայլը
աւելի մեծ շուք տալու համար, գլանակը էլի
դրեց բերանը. բայց, իսկական ծխախոտից վախե-
նում էր, ուստի այս անգամ բերանը շօկոլադի
գլանակ դրեց: Մէկ էլ յանկարծ սաստիկ փոթոքիկ
բարձրացաւ, մի կատարեալ մըրիկ և այնպէս
փչեց, որ գետնի փոշին, տերեները, թղթի կառո-
ները և այլ մանր մունը բաները օդի մէջ սկսե-
ցին պտոյտ գալ: Եւ հէնց որ քամին հովանոցի
տակ մտաւ, հովանոցը բարձրացաւ վերև, գայ-
լին էլ իւր հետ քաշ տւեց տանիքների վրայով
ուղիղ գէպի ամպերը:

Գայլը զարմանքից աչքերը չուց ու մտածեց.

—Այ քեզ օյին, գրողը տանի: Ես չգիտէի
էլ, որ կարող եմ թռչել, սակայն այդ բանը ինձ
բոլորովին դիւր չի գալիս: Իսկ կինը գլուխը վեր
բարձրացրեց և բղաւեց:

—Գայլ, գայլ, ուր ես թռչում:

—Ես ի՞նչ գիտեմ, ուր եմ թռչում, պատաս-
խանեց խեղճ գայլը:



Տիմար լակոտներն էլ ուրախացան և թռչո-
տելով աղաղակում էին:

—Մեր հայրիկը ազռաւ է դարձել: Մեր
հայրիկը թռչել դիտէ: Ի՞նչ քաջ է մեր հայրիկը:
Եւ այդպէս գայլը թռաւ ամպերից վերև,
թէ ուր—յայտնի չէ:

Հառաչեց կինը և ասաց ձագերին:

—Լսեցէք, երեխայք: Զեր հայրը թռաւ ոչ
թէ այն պատճառով, որ քաջ էր, այլ որովհետեւ

այդպիսի անշնորհք պոչ ունէր։ Այսուհետեւ յաճախ յիշեցէր հայրիկին, որպէս զի նա շուտով վերադառնայ, ապա թէ ոչ առանց հայրիկի սաստիկ տիսուր կլինի մեր օրը։

Մուրազը սրտներումը մնաց, էլ չկարողացան հիւր գնալ սանսամայր Սօնայի մօտ։ Վերադարձան տուն և պառկեցին քնելու։ Մինչև քնելլամբողջ ժամանակ մտածում էին. «Ուր թուամեր հայրիկը»։



ՀԱՅ-ԱՐՄ ՕԾԲ
Հ. Ա. ՄԱՇԱԿԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿADEMIA
1952

26395

809

арм
6162.

D

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОГО
Академии Наук
СССР

ՀՀ Ազգային գրադարան



NL0387460

2550